Թիւ 272 ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ 1875 ՆՈՅԵՄԲԵՐ 11

ՀԱՅՐԵՆԻՔ

ԳԱԶԱԹԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ամեն ԵՐԵՔՇԱԲԹԻ օրերը կը հրատարակուի: Պօյսոյ համար 30 բուռց գինն է 2 արծաթ Մէճիտ կանխիկ. բղպատարուբեան ծախքը բաժանորդաց վրայ. իսկ գաւառաց համար 2 1/2 արծաթ Մէճիտ: Ծանուցման տողը 2 գրշ:

Գաւառաց բղպատարի ծախքը բաժանորդաց չ'վերաբերիր:

Լրագրոյս վերաբերեալ որ եւ է գրութիւն ուղղելի առ Տճօրէնխմբագիր Մ. Ճ. Մելիքեան ի կ. Պօլիս. Չիւմպիւլիւ խան վերնայարկ թիւ. 10:

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՈՂՔԱԼԻ ՄԱՍԻՍ,

եւ

Դ. ԱԼԱԹԻՈՑ ԽՄԲԱԿԸ.

Շար. գե. Բէ. 271

Կըսեն թէ «խմբակը դաւառաց առաջնորդներն իրեն հլու կամակատարներն ըրած է. եթէ առաջնորդ մը անսաստէ անոր հրամանին, վա՛յ է իրեն, անշուշտ հարուածի մը կը հանդիպի»:

Մասիս այս ըսածին օրինակ կուտայ Սեբաստիոյ Պետրոս վարդապետին Պօլիս բերուիլը, և կըսէ թէ ասիկա խմբակին ղօրութեամբն եղած է և իբր թէ խմբակին պարադլուխներէն միոյն խոստովանութիւնը կայ եղերը իր ձեռ, զոր մինչև ցայդ պահեր և հիմա եղերը կը պատմէ:

Պետրոս վարդապետ Պօլիս բերուած ատեն Սեբաստիոյ առաջնորդչէր. անոր Պօլիս գալէն վերջը սահմանադրութիւնը Սեբաստիոյ մէջ դործադրուեցաւ և նորընտիր դաւառ. ընդհանուր ժողովոյ քուէով Պետրոս վարդապետ Սեբաստիոյ առաջնորդ ընտրուեցաւ. բայց թէ ինչո՞ւ Մասիսի ակնարկած անձը այդ ընտրութեան դէմ չէ հակառակեցաւ, սա կարճ պատասխանը կուտամք թէ Սեբաստիոյ համար ընտրելի ըմբռնեալ եկեղեցականներուն վրայ ուղեցած համարումը հետզհետէ ուղնայացած և անհետ եղած էր, այդ համբաւեալ եկեղեցականաց վոխանակ ազդասիրութիւնը տեսնել սկսած էր. ուստի համզեց Սեբաստացի բաժանեալ կուսակցութիւնները թէ սահմանադրական ժողով ունենալէ վերջը ուրիշ երկիւղ մը չունին և չեն կրնար այլ ևս ուշնեննալ, բաւական է որ իրենց ազգային պարտուց և իրաւանց մասին անփոյթ չ'ըլան: Տարակոյս չկար որ Սեբաստիոյ առաջնորդական խնդիրը եթէ այսպէս չէր վերջանար, Սեբաստիա ալ վանայ քսանամեայ և Մշոյ երեքտասանամեայ դժբաղդութեանցը ենթակայ պիտի ըլլար:

Կըսեն թէ խմբակը Իզմիրի խնդիրը կը յուզէ, որպէս զի Խրիմեան Իզմիրի առաջնորդ չըլլայ:

Այս խոստովանութենէն յայտնի կերևի որ իրենք Իզմիրի խնդիրը կը յուզեն և եղած օրինաւոր ընտրութիւնը ապօրինաւոր ցուցնելու վատութիւնը կընեն, որպէս զի Խրիմեան Իզմիրի առաջնորդ ըլլայ: Ուրեմն որչա՛փ մեծ տխմարութիւն էր Խրիմեան Սրբազանի ոտնցատին դարման ըլլալու համար ղոյն Իզմիր խրկելու քաղաքականութիւնը դարձածելը, որ չատերու ձիծաղը չարժեց: Խմբակը լաւ կը համարի նորա Պօլսէն մեկնիլը, թէև գիտէ որ ա՛ւր որ երթայ նա, օգտակար չպիտի ըլլայ. բայց դէթ ուղղ մասին պատիժ մը կըլլայ: Սակայն խմբակը Իզմիրի ժողովրդեան իրաւանց ոտնակոխ ըլլալն ալ տեսնել չուզեր և անոնց այս չարժման համակրութիւն կը ցուցնէ. ասկէ կարելի՛ է միթէ հետևցնել որ խմբակը Իզմիրը կը գրգռէ. կարելի՛ է քաղաքի մը 6–700 ժողովուրդը ոտքի հանել:

Կըսեն թէ խմբակը երզնկան կը գրգռէ:

Երզնկայի խնդրոյն մէջ լոկ Քրիսաոստուր էֆէնտիի անունը կայ. բայց նոյն իսկ խմբակին անդամները այդ խնդրոյն մէջ իրարու հետամուտ չեն. վասն զի տակաւին յայտնի չէ թէ խնդիրը մասնաւո՛ր է եթէ ընդհանուր: Բայց հանրական խնդրոց մէջ խմբակին անդամները միշտ իրարու հետ կը միաբանին. եթէ լսեն թէ Ազգին չահերուն վնասակար որևէ նօրէնութիւն մը եղած է, իրենց խընդիրներն առ ժամանակ մի կը զսպեն կամ ետքի կը պահեն և նախ հանրական խնդիրը ձեռք կառնեն, ինչպէս յայտնի տեսնուեցաւ Խրիմեան Սրբազանի հրաժարականի խնդրոյն մէջ. ալակողմէ՝ ձախակողմին իր մէջը բաժանեալ ըլլալէն օգուտ քաղել ուզեց, բայց չըյաջողեցաւ. դի օդոստ. 25ին ձախակողմ ամբողջ միացեալ էր և այս միացեալ ղօրութեան առջև ալակողմին և անոր պարագլուխ տիվլօմաթիքոս էֆէնտիներուն բլանը վեր ի վայր տապալեցաւ:

Կըսեն թէ Դրիդորիս վարդապետ առաջնորդ գացած ատեն խմբակին Պրոպատիկէէն անցեր է. բայց եպիսկոպոսանալու ատեն այդ Պրոպատիկէէն անցած չըլլալուն համար, այժմ այս արգելքներուն կը հանդիպի: Ըսել կուզեն թէ Դրիդորիս վարդապետ առաջնորդ գացած ատեն խմբակին անդամները կաշառեր է: Ահա՛ Դրիդորիս վարդապետ իրենց պաշտպանեալն է. թո՛ղ ըսէ թէ այս պիսի կաշառք որի՛ տուած է. կամ թո՛ղ Դրեն Դրիդորիս վարդապետին և կաշառակերը հրապարակաւ խայտառակեն:

Միթէ այս աներես անձինքը չե՞ն որ խմբակը իրը վհուկ կաթոդիկոսէն. կաշառեալ ամբաստանեցին, բայց երբ բողոքեղաւ և այդ բողոքը մինչև Ազգային Ժողովոյ ատեանը եկաւ, այդ աներեսները ուրիշ հնար չէ գտան, բայց եթէ Ս. Պատրիարքին թեւերուն տակ մտնել և անոր սպառնալեաց չնորհիւ ազատիլ այն դատապարտութենէն որ սև դրոշմի մը պէս իրենց չքրտնող ճակտին վրայ պիտի կնքուէր: Բայց ողջամիտ ժողովուրդը կարող է կշռել. անոնք որ ուրիշներուն համար կաշառակեր է, կը պառան, իրենք են բուն իսկ կաշառակերները և պառաւնուն պատճառն ալ սա է որ կաշառք ուտելու դրները իրենց առջև դոցուած ըլլալով, ուրիշներու առջև բացուած կը կարծեն: Այս մասին ուրիշ առթիւ պիտի խօսինք, եթէ հարկ ըլլայ:

Դալաթիոյ խմբակը միայն Դալաթիոյ մէջ չէ, այլ ամեն տեղ է. Պէշիկթաշ, Իւսկիւտար, Ամասիա, Թոսպիւղ և այլ ամեն թաղերու, նոյն իսկ դաւառներու մէջ: Այս խմբակաց նշանաբանն է Ազգին ղեկավարել պալապանել. Ուստի ան որ ճշմարիտ հայ է և անկախ օտար ազդեցութենէ, անշուշտ ինքն ևս ձայնակից կըլլայ ի նպաստ ազգային շահուց եղած այս չարժման, թէև ինքն ի պաղատատ ըլլայ: Այս ղօրութիւնը եթէ նիւթական ըլլար, դիւրին էր նուաճելը, բայց բարոյական է և այս բարոյական ղօրութիւնը անյաղթելի է: Ձչմարիտ Հայը չկրնար հաժոլուիլ թէ ազգային չահերը օտար չահերու հետ կրնան համաձայնիլ, կամ թէ ազգին չահերը օտար չահերու հետ կրնան ի մի ձուլուիլ: Բարեմիտ հայեր կրնան խաբուիլ սխալ վարդապետութենանց անսալով, բայց իրենց սխալը չուտով կուզդեն:

Այսպիսի խմբակի մը կազմութիւնն ու անունը նոր կը լսուի, բայց դոյութիւնը նոր չէ: 1856 են ի վեր խմբիլ սկսած է, երբ Պալաժէնիայի խնդիրը կը յուղուէր. Թուրքիոյ Հայ պաշտօնատարք այս մասին Ազգին ծառայութիւնները ըրին, ցուցընելով թէ տիրող կառավարութիւն մը ի՛նչպէս կը միջամտէ ազգային ներքին գործոց և թէ այս տեսակ միջամտութիւն մը ի՛նչ հետեւանքներ կրնայ ունենալ: 1866 մարտ 20 ի պետական հարուածն ալ մեր ազգային ներքին գործոց մէջ Ալի փաշայի մեկ միջամտութիւնը նկատուեցաւ. կամ թէ ճիշդն ըսելով, ոչ պաշտօնական անձանց իրը պաշտօնական անձ Ալի փաշային ճանչցուիլը. այն օրը շատեր ազգային այն միջամտութեան ի՛նչ ըլլալը և ատոր աղետալի հետևանքը: Բայց չկրցին խլրտիլ. Սամաթիոյ և կէտիկ փաշայի ահագին հրդեհները և քօլէրան զամենքն անդամալուծեր էին. սակայն Բ. Դրընէն ծնունդ առնող խառն ժողովը երբ ընդհանուր գաւառացիներէ տեղեկութեան ձեռօք մարդ գլուխ 40 փարայ տուրք հաւաքելու դրութիւնը կառաջարկէր, թոյլ չտուին իրեն. երբ Պօղոս պատրիարք ըսաւ թէ «կուզեմ հրաժարիլ, բայց Ալի փաշա չկամիր,» պատասխանեցին իրեն «չատ լաւ, ուրեմն Պատրիարքարան նստէ և եկեղեցի մի՛ իյներ, Ալի փաշային պատրիարքն եղի՛ր և ոչ Ազդին»: երբ Տեղապահ Արիստակէս Սրբազան վեհ. Սուլթանին պալատէն կառնէր կը քալեր և 400 տարուան հաւատարիմ հպատակ ազգի մը ներկայացուցիչը չէր ուզեր իրմէ բաժանեալ և օտար ազդեցութեան չնորհիւ առաջ անցնիլ ըզգոյ ափ մը ժողովրդին ներկայացուցիչներն յետադաս մնալ, անդին ազգին անունը բերաններին չառնող էֆէնտիներ յանդիմանական դիր կը գրեին և Պատրիարքարանի դուռը ո՛ւր ըլլալը չը գիտցող խումբ մը անձինք Պատրիարքարան կիջնէին, համոզելու համար ղՆորին Սրբազնութիւնը որ լռելեայն երթայ Ալի փաշային դուռ ըսէ . . :

Այս և ատոնց նման տիվլօմաթիքական խաղեր երբ մէկ կողմէն տեղի կունենային, միւս կողմէն ատոնց հետեւանքը հետազօտող հեռատես աչքեր հեռուէն կը դիտէին այս ամէնը և ատոնց թիւն օր օրի կը բազմապատկէր, մինչև որ այսօր ատոնք ստուար խումբեր կը կազմեն Ազգին մէջ և ո՛չ թէ քանի մը անձէ բաղկացեալ խմբակ մը:

Տիվլօմաթիքական խաղուց հեղինակները կը տեսնէին հետզհետէ իրենց խումբին տկարանալը և միւս խումբին ղօրանալը. վերջին փորձ մը միայն մնացած էր:

Անոնք գիտէին որ ա՛յլ եւս Ալի կամ Ֆուատ փաշա չը կային, որ ոչ պաշտօնական անձինքը պաշտօնական ձեւի տակ նկատեն և ազգին ներքին գործոց միջամտեն. ուստի այս անգամ ուղեցին ժողովուրդն յետ ժողովրդեան մղրդեն հրաժարեցնել և Սահմանադրութիւնն անգործադրելի ընել. բայց ատոր մէջ ալ չը յաջողեցան: Եւ ահա՛ այս պատճառաւ է որ Մասիս և Արեւելեան Մամուլ. կրակ կտրած են. որովհետև այս վերջին պատերազմին՝ հայ Ֆրանմասոններու բանակն ալ միացած էր Զմիրնի խանի Ֆրանմասոններ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՎԱԺԱՄԱՆԱԿ

(Շաբ. 4ին 27)

1.

Ը. Յոհ. Ի՞նչ պիտի ըլլայ ձեր վերջին որոշումը Պիղատոսի մասին, որ ձեզի համար Աստուծոյ Որդին դատապարտեց մահուան։ Ձեր կարծիքով ան արդա՞ր էր, թէ անարդար։ Ինչո՞ւ։

Ա. Ես կը կարծեմ, որ Պիղատոս արդար էր իր դատավճռին մէջ, որովհետեւ ան գիտէր, որ Յիսուս անմեղ էր եւ ոչ մէկ յանցանք ունէր, որ մահուան արժանի ըլլար։ Ան գիտէր նաեւ, որ Յիսուսի դատապարտութեան պատճառը նախանձն էր, զոր քահանայապետները եւ ժողովուրդի առաջնորդները ունէին անոր դէմ։ Ան գիտէր նաեւ, որ Յիսուսի հետեւորդները խաղաղասէր մարդիկ էին եւ ոչ մէկ վտանգ կը ներկայացնէին Հռոմէական կայսրութեան համար։ Ուստի Պիղատոս ամէն ջանք թափեց Յիսուսը ազատելու համար։ Ան ուզեց, որ Յիսուսը ազատ արձակուի, որովհետեւ ան գիտէր, որ Յիսուս անմեղ էր։

Ը. Յոհ. Ինչո՞ւ Պիղատոս չկրցաւ ազատել Յիսուսը, եթէ ան անմեղ էր։

Ա. Պիղատոս չկրցաւ ազատել Յիսուսը, որովհետեւ ան վախցաւ ժողովուրդի ամբոխէն, որ կը պահանջէր Յիսուսի մահը։ Ան վախցաւ նաեւ, որ քահանայապետները եւ ժողովուրդի առաջնորդները պիտի գանգատին Հռոմի կայսեր մօտ, եթէ ան չդատապարտէր Յիսուսը մահուան։ Ան վախցաւ, որ կայսրը պիտի զրկէ զինք իր պաշտօնէն, եթէ ան չդատապարտէր Յիսուսը մահուան։ Ան վախցաւ, որ կայսրը պիտի զրկէ զինք իր պաշտօնէն, եթէ ան չդատապարտէր Յիսուսը մահուան։

Ը. Յոհ. Ինչո՞ւ Պիղատոս չկրցաւ ազատել Յիսուսը, եթէ ան անմեղ էր։

Ա. Պիղատոս չկրցաւ ազատել Յիսուսը, որովհետեւ ան վախցաւ ժողովուրդի ամբոխէն, որ կը պահանջէր Յիսուսի մահը։ Ան վախցաւ նաեւ, որ քահանայապետները եւ ժողովուրդի առաջնորդները պիտի գանգատին Հռոմի կայսեր մօտ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հրատարակվում է ամեն ուրբաթ օրը Վաղարշապատում։

Գնորդների համար տարեկան 10 մանեթ արծաթով, կիսամյա 5 մանեթ, երեք ամսվա 2 մանեթ 50 կոպեկ։ Առանձին համարը 15 կոպեկ։

Տարեկան բաժանորդագրությունը ընդունվում է Վաղարշապատում տպարանի գրասենյակում, իսկ հեռավոր տեղերից՝ տպարանի հաշվին ուղարկված փոստային դրամատոմսերով։

Տարեկան բաժանորդագրության գինը վճարվում է նախապես։

Առանձին համարները վաճառվում են Վաղարշապատի գրախանութներում։

Տարեկան բաժանորդագրության գինը վճարվում է նախապես։

Առանձին համարները վաճառվում են Վաղարշապատի գրախանութներում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հրատարակվում է ամեն ուրբաթ օրը Վաղարշապատում։

Գնորդների համար տարեկան 10 մանեթ արծաթով, կիսամյա 5 մանեթ, երեք ամսվա 2 մանեթ 50 կոպեկ։ Առանձին համարը 15 կոպեկ։

Տարեկան բաժանորդագրությունը ընդունվում է Վաղարշապատում տպարանի գրասենյակում, իսկ հեռավոր տեղերից՝ տպարանի հաշվին ուղարկված փոստային դրամատոմսերով։

Տարեկան բաժանորդագրության գինը վճարվում է նախապես։

Առանձին համարները վաճառվում են Վաղարշապատի գրախանութներում։

Տարեկան բաժանորդագրության գինը վճարվում է նախապես։

Առանձին համարները վաճառվում են Վաղարշապատի գրախանութներում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հրատարակվում է ամեն ուրբաթ օրը Վաղարշապատում։

Գնորդների համար տարեկան 10 մանեթ արծաթով, կիսամյա 5 մանեթ, երեք ամսվա 2 մանեթ 50 կոպեկ։ Առանձին համարը 15 կոպեկ։

Տարեկան բաժանորդագրությունը ընդունվում է Վաղարշապատում տպարանի գրասենյակում, իսկ հեռավոր տեղերից՝ տպարանի հաշվին ուղարկված փոստային դրամատոմսերով։

Տարեկան բաժանորդագրության գինը վճարվում է նախապես։

Առանձին համարները վաճառվում են Վաղարշապատի գրախանութներում։

— Լօնտրայի մէջ Մէմմուհէի անուն զրահաւոր չոգենաւի մը չինութիւնը լմնցած ըլլալով, ամսոյս 17 ին (ըստ լատ.) ճամբայ ելեր է մայրաքաղաքս գալու համար. հետեւաբար յառաջիկայ շաբթու հոս կը հասնի։

— Վօլօի (Քօլօզ)ի մէջ հոկտ. 22 ին երկրաշարժ պատահեր, բայց վնաս չէ պատճառեր։

Շաբաթ երիկուն ալ մայրաքաղաքիս մէջ երկրաշարժի փոքրիկ ցնցում մը պատահեցաւ, որ հազիւ մէկ մանրերկրորդ տեւեց։

— Նաւապետ Իզզէթ պէյ ձիտտէի նաւահանգստին հրամանատար, նոյնպէս Անթիվարիի նաւահանգստին հրամանատար Հասան փաշա, կրետէի նաւահանգստին հրամանատար անուանուեր են։

— Այս գիշեր առաւօտեան ժամը 12 ին միջոցները երկրաշարժ պատահելով, ահագին ցնցումը տեղի ունեցաւ։

— Կը լսեմք թէ երէկ իրիկուն Նամըդ փաշա զինուորական գործոց պաշտօնեայ և Բիզա փաշա ծովային գործոց պաշտօնեայ անուանուեր են։

— Այս գիշեր Պալատ հրդեհ պատահելով, տուն մը այրեր է։

ՀԱՅՐՄԷԿՕՎԻՆ

Պօսնայի կուսակալ Րէուֆ փաշա զինուորական գործոց պաշտօնատան ուղղած հեռագրով մը կը ծանուցանէ թէ փիվաի մէջ ապստամբաց գունդերը գումարուելու լուր մը հոն հասնելուն պէս, տասը վաշտ զօրք անվիջապէս փիվա խրկուեցան Շէվքէթ փաշայի հրամանատարութեամբ. ասոնք հոն տասը հազար ապստամբաց հանդիպելով, որոնց մէջ բազմաթիւ Դարատաղցիներ կը գտնուէին լեռնային ամուր դիրքով մը ամրացած, արիւնուռւշտ կռիւ մը տեղի ունեցաւ որ կէս օրէն մինչև արեւը խոնարհելէն մէկ ժամ վերջը տեւեց։ կայսերական զօրքերը ապստամբները ցիր ու ցան ընելով, պատերազմի դաշտին վրայ բանակեցան։ Ապըստամբք կրակ վառելով, իրենց մեռեալներն սկսան ժողվել։

Հետեւեալ օրը կռիւը նորէն սկսաւ և առտուընէ մինչև իրիկուն տեւեց. այս անգամ ապստամբք կատարելապէս յաղթուեցան և տեղերնին դարձան 400 մեռեալ թողլով։ կայսերական զօրաց կորուստը այնքան զգալի չէ. իսկ մեռեալ բնաւ չունեցան։

— Անցեալ շաբթու հրըատարակած էինք թէ ապստամբք իրենց ներքին դիտաւորութիւնը և փափաքը յայտնելու նպատակաւ վիէննայի, Պեռլինի և Ս. Փեթրսպուրկի կառավարութեանց պատգամաւոր խրկելու մտադիր են։

Այս անգամ եւրոպական լրագիրներէն կը տեղեկանամք թէ ապըստամբաց պատգամաւոր խրկելու նպատակը հետեւեալ չորս առաջարկութիւնները յիշեալ կառավարութեանց ներկայացնել է եղեր։

1. Ապստամբք այլ ևս չեն կրնար Թուրքիոյ իշխանութեան ներքև ապրիլ։

2. Ապստամբք կը փափաքին որ կառավարութիւնք այս խնդրոյն միջամտութիւն ընեն և մինչև որ որոշ տնօրէնութիւն մը ըլլայ այս մասին, Հերսեքի մէկ գաւառը ազատ և չէզոք ճանչցուի, որպէսզի իրենց ընտանիքն ու ջաւակները առանց երկիւղի կարենան հոն բնակեցնել։

3. Ապստամբք պիտի խնդրեն կառավարութիւններէն որ Հերսեքի տեղերը կառավարութիւնք առնեն և իրենք վարեն, մինչև որ այս ծանուցեալ խնդիրը վերջնական որոշուելն ուտանայ։

4. Ապստամբք կը յայտնեն որ Հերսեքի և Պօսնայի իշխանութիւնք հարկատու տէրութիւն մը ըլլան գլուխ ունենալով իրենց քրիստոնեայ իշխան մը։

Եթէ չեմք սխալիր, կըսե լա թիւրքի, այս պատգամաւորութեան լուրը անհիմն ելած, մանաւանդ թէ երեք կառավարութիւնք այսպիսի անպատեհ առաջարկութիւն մը ընդունելէ շատ հեռի են։

— Կասկած կայ որ եթէ Սերվիոյ և Դարատաղի իշխանութիւնք Հերսեքի ապստամբաց չօգնեն, կարիպալի օգնութեան պիտի հասնի։ Արդէն ապստամբաց գլխաւոր Լիւպիպրաթիչի ենքնագիր նամակ մը գրելով կարիպալտի, զանոնք քաջալերեր և յառաջիկայ գարնան կամաւորաց գունդ մը խրկել խոստացեր է։

— Աթէնքի լրագիրները կը ծանուցանեն թէ Քլէքէն եկող արքունի չոգենաւ մը մէջը ունենալով վիրաւորեալներ, Քիմիի նաւահանգիստը երկաթ նետեր և աւրուած մեքենան քանի մը ժամուան մէջ չինելէ վերջը Քօլօզ երթալու համար ճամբայ ելեր է։

— Եանեայի պաշտօնական լրագրին կը տեղեկանամք թէ Խիւտաիվէնտիկեար անուն արքունի չոգենաւը ամսոյս 13 ին (ըստ լատ) փոէվէզա հասնելով, 600 զինուոր (իմթիաթ) և 200 դրաստ փոխադրեր է Հերսեք։

— Աւստրիոյ լրագիրք կը ծանուցանեն թէ, Զարքօ քահանային հրամանատարութեան ներքև գտնուող ապստամբաց գունդը նուաճուեր և կամաւորք Սերվիա դառնալով զէնքնկէց եղեր են։

— Պասիրէթ լրագիրը կը գրէ թէ կայսերական զօրքերը քալառողլ վիճակի մը մէջ են և թէ շատեր հրնաղանդութիւն յանձն առեր են։ Դարատաղի սահմանները գտնուած քանի մը գիւղեր միայն ապստամբութիւնը կը շարունակէ, որմէ կը հասկցուի թէ Դարատաղցիք են ապըստամբութիւնը դրդռողները։ կայսերական բանակը ապստամբութեան այս աննշան մնացորդը քիչ առեն մէջ ջնջելու համար անշուշտ իր հայրենասիրական ջանքը չը պիտի խնայէ։ Եւ թէպէտ Հերսեքի մէջ ամրոցեալ զինուորական զօրութիւնը բաւական է անդորրութիւնը վերահաստատելու, սակայն աւելի շուտ կատարելու համար, կառավարութիւնը որոշեր է վեց գունդ կանոնաւոր զօրք եւս խրկել։

Փարիզի մէջ հետեւեալ աղէկտուր դէպքը պատահեր է։

Հոկտ. 19 ին Փարիզի Լէքրուպ թաղին բնակիչներէն մէկը կուգայ քաղաքապետին իմաց տալու թէ Շնէյտէր անուն կին մը սենեակին մէջ մեռած գտնուած է. ոստիկանութեան գործակատարը բժիշկի մը հետ յիշեալ տունը կերթայ և մեռեալին սենեակը մտնելով, կը տեսնէ որ սառուցեալ սենեակին մէջ դէզ մը յարդի վրայ կին մը պառկեր է առանց ծածկոյթի, զոր ունենալով երկու տարեկան տղակ մը նիհար, ժժգոյն որ յուրտէն ու անօթութենէն հոգեվարք վիճակին մէջ կը դողդղայ, չկրնալով մինչև անգամ պոռալ։

Յիշեալ կինը Դաղղիոյ պատերազմէն վերջը Ալզասէն Փարիզ գալով, գործաւոր եղած էր. բայց վերջերը անկարող ըլլալով իր հայը ճարելու, մանաւանդ թէ հիւանդութիւն վրայ գալով, նորածին տղուն հետ մերկ և անօթի կանցներ իր օրերը, մինչև որ օր մը քանի մը կոտր լաթով ծածկուելով, տղուն հետ կը պառկի մէյմ՛ալ չարթննալու պայմանաւ։ Տղան որ մերկ և անօթի էր, տեսնելով թէ մայրը չարթննար, կսկսի պոռալ կանչել. այնպէս որ ձայնն ալ մարելով և ինքն ալ թմրելով, անզգայ կը դառնայ։ Ահա՝ այս միջոցին դրացիք վազելով և եղածը տեսնելով, քաղաքապետին իմաց կուտան։ Քաղաքապետը տղան հիւանդանոց կը խրկէ, իսկ մայրը թաղել կուտայ։

Քաղաքապետը եկած ատենն տղուն երկու ոտքը սառած էին. իսկ մայրը վերցնելու ատեն տեսնուեր է որ խեղճ կինը շապիկ անգամ հագած չէ, այլ կտաւի կտորներով իր մարմինը ծածկեր է։

Ընդհուպ առաջնորդական Տեղապահ Մինաս վարդապետ և տեղւոյն դատական ժողովը նամակաւ ծանուցեր են ի Պատրիարքարան, թէ տեղւոյն վանուց հողերն ասկէ առաջ կալուածոյ քեաթխիին նենգութեամբ նախորդ վանահայր հանդուցեալ Պաղտասար վարդապետի անուան ներքո եղած ըլլալով, այժմ նորա վախճանման առթիւ նոյն հողերը մահկիւր ինկած և դրաւուելու վրայ են. հետևաբար կը խնդրեն որ սոյն վանուց իրաւունքը պաշտպանելու համար հարկ եղած տնօրինութիւնն ընելու Աղդ. պատրիարքարանի կողմանէ։

— Երզնկայի կրօնական ժողովոյ կողմանէ դարձեալ բողոքագիր մը հասաւ երէկ յԱզգ. Պատրիարքարան, որ կը յայտնէ թէ Առաջնորդը ժողովուրդը գրգռելով կստիպէ որ գինքը պաշտպանեն և 8000 ղրշ. պահանջը ունենալով, նոյն դատարին վճարուելուն կսպասէ, որպէսզի երզնկայէն մեկնի։

Բողոքագիրը կը յայտնէ թէ խառն ժողովոյ թախանձանաց հակառակ Ալէաթճեան ընդհանուր ժողով դումարել չուզեր։

Զգիտեմք թէ սոյն տեղեկութիւնք ի՛նչ աստիճանի ստուգութիւն ունին բայց սա գիտեմք որ Ալէաթճեան ազգային օրինաց հմտութիւն ունենալով, այդպիսի հակասահմանադրական ընթացքի մը մէջ գտնուելու չը զիջանիր։

Տօգթօր Մ. փափազեան իր բնակութիւնը հաստատած է Ղալաթիա Հայոց եկեղեցւոյ փողոց. ամեն օր մինչև կէս օր և երեքշաբթի օրերն ալ ձրի կը դարմանէ։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ԼՕԱՐԱՆ

Բժշկապետ Տէքթ. Գ. Քափամաճեան

Բողոքականաց հակասութիւնները և սխալները վկայութիւններով և փաստերով ցուցընող տետր մ՛է, որ մինչև չորրորդ թիւը հասած է։

Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղութեան փափաքող ազգայնոց պարտքն է քաջալերել այս նորատի հեղինակը։

Կը ծախուի կամուրջին գլուխը պարագան գին 40 փարայ։

ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՑ

Ե. Ա.

Ա. Տեփ.

Ընտանեկան կենաց, մանաւանդ հայ տիկնանց վերջին տարիներս ուղեցած կեանքին վրայ կը խօսի։

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով։

Գինն 100 փարայ։

Վ.ԱՌ.ԱՐԱՆԻ ՄԸ ԿԱՑԾԵՐ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Տ. Սարգիսեանի

73 երեսէ բաղկացեալ տետր մ՛է որուն մէջ կը պարունակին ոտանաւոր լեզուաւ գրուած այլ և այլ քերթուածներ։

Այս գրքոյկը հեղինակին վառվռուն աշխոյժը ու խմաստալից միտքի մը ծնունդը յայտնի կը ցուցնէ և բանասիրաց քաջալերութեանն արժանի է։

Կը ծախուի բոլոր գրավաճառաց քով գին $1/4$ արծաթ մէճիտ։

Դաւառաց մէջ Հայերէնի և Տաճկերէնի չափաւոր ամսականաւ դասատուութիւն ընելու պատրաստ մէկը կայ։

Ուզողը լրագրոյս տնօրէնութեան պէտք է դիմէ։

ՄՈՒՇԵՂ ԵԻ ԿԱՎԻՆԻԿԷ

ԿԱՄ ՊՍԱԿ ՄԸ ՑԱՆՁՐԴԻ

գրեաց Յովհաննէս Ս. Մաթկեան

Մաշկերտցի

Սոյն գեղջկական վիպասանութիւնը իւր պարզ ոճովն ու հետաքրքրական տեղեկութիւններովը ընթերցասէր ազգայնոց ուշադրութեանը արժանի է և նորա ինքնաբոյս հեղինակը քաջալերութեան արժանի։

Կեդրոնատեղին է Մերճան չարչը Ֆրէնկեան դրատունը. կը գտնուի նաև Ալաճա-Համամ Լամպաճի Զախմիչեան Բարութիւն աղայի խանութը. Բերա ծախավաճառ Ստեփան աղայի խանութը և բոլոր գրավաճառաց քով։ Գինն է կէս արծ. մէճիտ։

Ա Զ Դ

Լրագիրս ձեռքէ կը ծախուի կամուրջին գլուխը պարագան, սուճի Պ. Պօղոսին խանութը և կամուրջին վրայ լրագրավաճառներու քով։

ՏՆՕ.—ԽՄԲ. ՏԷՐ
Մ. Ց. ՄԵԼԻՔԵԱՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ
Բիզափաղա խան թիւ 3